**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության արդյունքների /2017-18 ուստարի/**

**Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Ուսումնական հաստատությունների առջև դրված հիմնական նպատակի՝ այն է աշխատաշուկային տալ մրցունակ մասնագետներ, իրականացման համար իր ուրույն դերն է ստացել գործատուն, քանի որ գործատուն, որպես շահակից կողմ համարվում է համալսարանի կրթական ծառայությունների սպառող: Այդ նպատակով ուսանողների ճիշտ և մրցունակ մասնագիտացման համար մեծ նշանակություն ունեն արտաքին շահակիցների գնահատականները, կարծիքները և առաջարկները: Այդ պատճառով բուհ-գործատու կապի ամրապնդումը համարվում է ուսումնական հաստատության գործունեության կարևոր ռազմավարական խնդիրներից մեկը: Այդ կապն ամրապնդելու, առավել մրցունակ և պահանջված մասնագետներ պատրաստելու նպատակով և հաշվի առնելով այն փաստը, որ ապագա շրջանավարտի ուսումնառության ընթացքում ձեռք բերած հիմնական գործնական հմտությունները և մասնագիտական կարողությունները հնարավոր է բացահայտել ուսանող-գործատու առաջին փոխգործունեության արդյունքներով ուսումնա-արտադրական և մանկավարժական պրակտիկաների ժամանակ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինը Ուսումնամեթոդական վարչության պրակտիկաների կազմակերպման բաժնի հետ համագործակցությամբ 2011թ-ից սկսած արտաքին շահակիցների շրջանում պարբերաբար անց է կացնում ուսումնասիրություններ հարցումների միջոցով:

Վերջին հարցումն անց է կացվել 2017-18 ուստարվա ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողների մանկավարժական, ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամանակ: Նշենք, որ ուսումնական տարվա ընթացքում.

- **<u>արտադրական պրակտիկային</u>** մասնակցել են «Պատմություն», «Հոգեբանություն», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Սերվիս», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Կիրառական արվեստ» և «Դիզայն» մասնագիտությունների առկա ուսուցման **98 ուսանողներ**, որոնք իրենց պրակտիկան անց են կացրել ՀՀ բնական և պատմական հուշարձանների տարածքում, հնավայրերում և թանգարաններում, Տավուշի մարզի դպրոցներում և մանկապարտեզներում, մարզի հյուրանոցներում և սպասարկման ոլորտի տարբեր օբյեկտներում, սոցիալական տարբեր ծառայություններում, Անշարժ գույքի կադաստրի Տավուշի մարզային ստորաբաժանումում, Իջևանի անտառտնտեսությունում և Դենդրոպարկում, «Քարարտ» փակ բաժնետիրական ընկերությունում, «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի երեխայի զարգացման և սոցիալական աջակցության կենտրոնում, Իջևանի արվեստի դպրոցում:

- **<u>մանկավարժական պրակտիկային</u>** մասնակցել են «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների առկա ուսուցման **75 ուսանողներ**, որոնք իրենց պրակտիկան անց են կացրել Տավուշի մարզի դպրոցներում:

- **<u>ուսումնական պրակտիկային</u>** մասնակցել են «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Սերվիս», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Կիրառական արվեստ» և «Դիզայն» մասնագիտությունների առկա ուսուցման **80 ուսանողներ**, որոնք պրակտիկան անց են կացրել ՀՀ բնական և պատմական հուշարձանների տարածքում, հնավայրերում և թանգարաններում, մարզի սպասարկման ոլորտի տարբեր օբյեկտներում, սոցիալական և հասարակական տարբեր

ծառայություններում, Անշարժ գույքի կադաստրի Տավուշի մարզային ստորաբաժանումում, Իջևանի անտառտնտեսությունում և Դենդրոպարկում, Իջևանի արվեստի դպրոցում:

Նշենք, որ նույն վայրերում 2 կամ 4 շաբաթ տևողությամբ արտադրական, ուսումնական և մանկավարժական պրակտիկաներ են անցկացրել հեռակա ուսացման 1-ինից 5-րդ կուրսի **357** ուսանողներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողները պրակտիկայի վայրեր այցելել են խմբերով, այն, որ միայն արտադրական և մանկավարժական պրակտիկաների ընթացքում են դրսևորվում պրակտիկանտների մասնագիտական որակները և չանտեսելով նաև կազմակերպման ընթացքում ծագած որոշ խնդիրները, ընդհանուր առմամբ հարցաթերթ տրվել է 33 արտաքին շահակիցների: Հարցման ժամանակ **արտաքին շահակիցները գնահատել են** մասնաճյուղի ուսանող-պրակտիկանտների տեսական գիտելիքները, գործնական հմտությունները, մասնագիտական խոսքը, ժամանակակից մեթոդներ կիրառելու հմտությունները, վարվեցողությունը, թիմում աշխատելու հմտությունները, նշել են պրակտիկանտների մոտ ուշադրության արժանի մասնագիտական առավելությունները, կատարել առաջարկներ:

Ըստ հարցման արդյունքների պրակտիկանտների մոտ շահակիցների կողմից բարձր են գնահատվել **տեսական գիտելիքների իմացությունը**՝ հարցվողների **84.9%** գնահատել են գերազանց (36,4%) ու լավ (48,5%), **գործնական հմտությունները**՝ **87,9%** (գերազանց՝ 36,4%, լավ՝ 51,5%) և **մասնագիտական խոսքը**՝ **81,8%** (գերազանց՝ 39,4%, լավ՝ 42,4%):




Ներկայացնենք պրակտիկանտների տեսական գիտելիքների իմացությանը, գործնական հմտություններին և մասնագիտական խոսքին արտաքին շահակիցների տված միջին գնահատականները վերջին 5 տարիների նույն հարցման արդյունքներով.



Նախորդ տարիների հետ համեմատական վերլուծությունից պարզ է դառնում որ, ինչպես վերջին հարցման արդյունքում, այնպես էլ նախորդ տարիների հարցումների արդյունքում նշված մասնագիտական հատկանիշները բարձր են գնահատվել շահակիցների կողմից (համապատասխանաբար **4.21**, **4.24** և **4.26**), և ինչպես նկատում ենք այդ գնահատականները բարձր են 4-ից: Իսկ 4.5-ից ցածր լինելը պայմանավորված է 4-ից 5 շահակիցների տված ցածր՝ 3 գնահատականով, ինչը մտահոգության տեղիք է տալիս: Այստեղ ամբիոնները պետք է ուշադրություն դարձնեն և փորձեն պարզել, թե որտեղ է պատճառը. արդյո՞ք դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ վայրում ուղղակի պրակտիկա են անցել ցածր առաջադիմությամբ ուսանողներ, որոնք չեն կարողացել իրենց դրսևորել, թե՞ իսկապես զգացնել է տվել ուղղակի նեղ մասնագիտական, տվյալ գործատուի պահանջներին անհամապատասխան պատրաստվածությունը և այլն: Արդյունքում, միգուցե անհրաժեշտություն կա վերանայել պրակտիկաների ծրագրերը, կամ նախապատրաստել ուսանողներին կոնկրետ պրակտիկայի վայրի պահանջներին համապատասխան ունակություններին ու կարողություններին, կամ ուղղակի ակնկալում ենք, որ գործատուները պրակտիկայի ընթացքում կաջակցեն լրացնել և մեր ուսանողների մոտ զարգացնել մասնավորապես գործնական հմտությունները և կարողությունները:

Ի լրումն ասվածին նշենք, որ բավականին շահակիցներ իրենց գրած բաց կարծիքներում վերոնշյալ հատկանիշները նույնիսկ համարել են պրակտիկանտների մոտ նկատելի առավելություն:

Հաշվի առնելով կրթության և գիտության ոլորտում տեղի ունեցող պարբերական զարգացումն ու առաջընթացը, հատկապես մանկավարժական պրակտիկայի տեսանկյունից, կարևորվում է դասավանդման ժամանակակից մեթոդներին ուսանողների տիրապետելու ունակությունները: Դրա վերաբերյալ շահակիցներն իրենց կարծիքներն արտահայտել են միջինից բարձր գնահատականներով. հարցմանը մասնակիցած շահակիցների **75,8%** պրակտիկանտների **դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետելու կարողությունները** գնահատել են **գերազանց (39,4%) և լավ (36,4%) գնահատականներով**:

Այժմյան գիտության ոլորտում մեծ առաջընթաց ունի տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, որի անհրաժեշտությունը զգացվում է գրեթե բոլոր ոլորտներում: Ինչից ենթադրելի է, որ աշխատաշուկայում մրցակցությանը դիմակայելու համար անհրաժեշտ է ունենալ տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու կարողություններ: Ուրախությամբ պետք է փաստել, որ մեր պրակտիկանտների մոտ **տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու** մակարդակը շահակիցների **81,8%**-ը գնահատել է բարձր (**գերազանց՝ 48,5%, լավ՝ 33,3%**):




Դիտարկելով վերջին 4 տարվա հարցումների արդյունքները, նկատում ենք, որ պրակտիկանտների կողմից դասավանդման ժամանակակից մեթոդներ և տեղեկատվական

տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունները արտաքին շահակիցները գնահատել են միջինից բարձր գնահատականներով (համապատասխանաբար՝ **4.06-4.62 և 4.34-4.85**):




Սակայն անհրաժեշտ է նշել, որ արտաքին շահակիցներն իրենց առաջարկություններում անդրադառնալով պրակտիկանտների վերոնշյալ կարողություններին, նկատել են նաև ընդգծված թերություններ և գտնում են, որ պրակտիկաների կազմակերպման գործընթացում անհրաժեշտ են ինչպես կազմակերպական, այնպես էլ բովանդակային փոփոխություններ:

Հաստատված փաստ է, որ Տավուշի մարզի աշխատաշուկայում հիմնականում մրցունակ են մասնաճյուղի շրջանավարտները, հետևաբար մասնաճյուղը ռազմավարական նպատակ ունի՝ տալ որակյալ կրթություն և ապահովել տարածաշրջանի աշխատաշուկան որակյալ կադրերով: Եվ հաշվի առնելով իրենց ոլորտի զարգացման գործում ժամանակակից գործատուների իննովացիոն մոտեցումները ինքնաբերաբար կարևորվում է կադրերի, այսինքն մասնաճյուղի շրջանավարտների կողմից մասնագիտական գործընթացի նկատմամբ ստեղծագործական մոտեցումներ դրսևորելու ունակությունները:

Այդ հատկանիշն իհարկե նախապես դրսևորվում է գործատուների հետ ուսանողների պրակտիկայի տեսքով առաջին հանդիպումների ժամանակ և կարևոր է, որ շահակիցների մեծամասնության կարծիքով պրակտիկանտների մոտ այդ հատկանիշը գտնվում է բարձր մակարդակի վրա: Իրենց կարծիքն արտահայտած շահակիցների **84%-ը** պրակտիկանտների **<u>մասնագիտական գործընթացին ստեղծագործաբար մոտենալու ունակությունները</u>** գնահատել են 5 և 4 գնահատականներով: 2014-15, 2015-16, 2016-17 ուսատրիների հարցման արդյունքում միջին գնահատականը եղել է 4.45-ից բարձր, իսկ 2017-18 ուստարում չնայած այն նախորդների համեմատ ցածր է՝ **4.09**, սակայն ընդհանուր առմամբ լավ գնահատական է, և ընթացիկ տարում պրակտիկանտների այդ հատկանիշը 3 գնահատել են նույն 5 շահակիցը, որոնց մասին նշվել է վերևում, ու մեկնաբանվել 3 գնահատական դնելու հնարավոր պատճառները և մասնաճյուղի խնդիրները:






Մասնագետի համար կարևոր է թիմային աշխատանքը, որը ենթադրում է մի շարք կարևոր առանձնահատկությունների համատեղում մեկ գործընթացում, այն է կարողանալ համագործակցել, պահպանել ճիշտ փոխհարաբերություններ, կարողանալ լսել և հաշվի առնել այլ անձանց կարծիքները: Որոշ դեպքերում աշխատանքի արդյունավետությունը կախված է հենց **թիմում աշխատելու հմտությունից**:

Բացի մասնագիտական բարձր որակներ և հմտություններ ձևավորելը կամայական բարձրագույն ուսումնական հաստատություն նպատակ ունի ուսանողի մեջ սերմանել նաև որոշակի որակական հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են ինչպես գործատու-ուսանող հարաբերություններում, այնպես էլ հասարակության մեջ ուսանողի դերակատարության ըմբռնման համար: Իսկ այդ որակական հատկանիշները դրսևորվում են հարաբերություններում **քաղաքակիրթ վարվեցողությամբ և էթիկայի նորմերի պահպանմամբ**: Սրանք այն երկու հատկանիշներն են, որոնք նույնպես կարևորվում են աշխատաշուկայում:

Մասնաճյուղի պրակտիկանտ–ուսանողների այս երկու հատկանիշները շահակիցների կողմից ստացել են բավականին բարձր գնահատականներ: Հարցմանը մասնակցած շահակիցների **93.9%**-ի կարծիքով ուսանողների մոտ բավականին լավ է զարգացած վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը (**գերազանց՝ 60.6%, լավ՝ 33,3%**), որին չի զիջում նաև թիմում աշխատելու նրանց հմտությունը (**84,8%**):







Հաշվի առնելով այն փաստը, որ ապագա աշխատուժ հանդիսացող շրջանավարտի հիմնական գործնական կարողությունները և հմտությունները դրսևորվում են մանկավարժական և արտադրական պրակտիկաների ժամանակ, կարևոր է դառնում դրանց արդյունավետ և նպատակային պլանավորումն ու կազմակերպումը: Մասնաճյուղն այդ համագործակցության շրջանակներում առավելագույնս պետք է արդյունավետ պլանավորի պրակտիկաների կազմակերպումը: Նշենք, որ արտաքին շահակիցները հարցման շրջանակներում գնահատել են նաև **պրակտիկաների կազմակերպման գործընթացը** և նրանց 94%-ը այն որակավորել է բարձր:




Ելնելով վերջին 3 տարվա հարցումների արդյունքներից, կարող ենք փաստել, որ պրակտիկայի կազմակերպան գործընթացը արդյունավետ է և մշտապես բարելավվում է:




Նշենք, որ հարցաթերթը պարունակել է նաև բաց հարցեր, որոնց միջոցով ակնկալել ենք հավաքագրել գործատուների կարծիքները մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական ընդգծված որակների վերաբերյալ, և ունենալ հստակ առաջարկություններ ուսումնառության գործընթացի բարելավման և գործնական ու պրակտիկ կարողությունների զարգացման ուղղությամբ:

Ըստ արտաքին շահակիցների, պրակտիկանտների մոտ **<u>որպես առավելություններ և ուժեղ կողմեր</u>** առանձնացվում են.

1. զարգացած գործնական հմտությունները, մասնագիտական բարձր պատասխանատվությունը,
2. պարտաճանաչությունը, աշխատասիրությունը, ուշադրությունը, լսելու ունակությունը,
3. աշակերտների կամ երեխաների հետ շփվելու և հաղորդակցվելու բարձր մակարդակը, երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը,
4. մասնագիտորեն ճիշտ ձևակերպված խոսքը,
5. նորին ու առավելագույնին ձգտելու ցանկությունը, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունները,
6. խորը գիտելիքները, մասնագիտական գրականությունից տեղին օգտվելու հմտությունները, ճիշտ և հետաքրքիր հարցադրումներ կատարելու ունակությունները, ստեղծագործական կարողությունները,
7. էթիկայի նորմերին հետևելու, թիմում աշխատելու կարողությունները:

Բացի այս մարդկային և մասնագիտական լավ հատկանիշներից արտաքին շահակիցների աչքերից չեն վրիպել նաև ուսանողների թերությունները և նրանք արտահայտել են իրենց ցանկությունները, նշելով, թե մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների **<u>մասնագիտական և մանկավարժական որ որակները կցանկանային փոխել</u>**:

Ներկայացնենք նրանց առավել ընդգծված ցանկությունները.

1. Ավելի լավ տիրապետեն դասավանդման ժամանակակից մեթոդներին, համակարգչային և տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին,
2. Փորձ ձեռք բերելու նպատակով ավելի հաճախ ներգրավվեն տարբեր պրակտիկ աշխատանքներում,
3. Փոխեն մոտեցումները ուսման նկատմամբ և սովորեն սովորեցնելով,
4. Արդեն իսկ մտածեն լավ մանկավարժ դառնալու մասին, դրա համար ձեռք բերելով ավելի շատ գիտելիքներ, մեթոդական հմտություններ և այլն,
5. Խորացնեն մասնագիտկան գրականությունից օգտվելու հմտությունները,
6. Դրսևորեն ձեռք բերած հմտությունները և կարողությունները կիրառելու ունակություններ:

Արտաքին շահակիցները նաև գտնում են, որ մեր ուսանողների մոտ պակասում կամ սահմանափակ է ընթերցասիրությունը, ժամանակակից մեթոդներով աշխատելու կարողությունը (3 շահակից), մասնագիտական խոսքը (4 շահակից), տեսական գիտելիքները (4 շահակից), գործնական հմտությունները (4 շահակից), թեպետ նրանց կողմից նշված հատկանիշներին տրված գնահատականներն այնքան էլ ցածր չեն: Այսինքն, վերլուծելու արդյունքում կարող ենք ամրագրել այն փաստը, որ արտաքին շահակիցների մոտ ուսանողների նույն հատկությունների վերաբերյալ ***կան նաև տարակարծություններ***, ինչը կարող է պայմանավորված լինել տարբեր մասնագիտությունների, կամ միգուցե անհատ ուսանողների պրակտիկայի ժամանակ ցուցաբերած ունակություններով:

Հարցման շրջանակներում կարևորվել է նաև պրակտիկայի կազմակերպման գործընթացի բարելավման համար արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկները: **<u>Հարցման մասնակիցները կատարել են մի շարք առաջարկներ</u>**, դրանցից են.

1. Երկարացնել պրակտիկայի տևողությունը կամ դարձնել ավելի հաճախակի,
2. Ավելի հստակ պլանավորել և կազմակերպել պրակտիկայի գործընթացը,
3. Պրակտիկայի իրականացման ընթացքը համալրել ավելի ժամանակակակից ուսումնական նյութերով,
4. Ուսանողներին նախապատրաստել նոր մեթոդներով աշխատելուն և հետո ուղարկել պրակտիկայի վայրեր,
5. Պրակտիկայի մեկ վայրում ներգրավել քիչ թվով ուսանողներ՝ աշխատանքի նկատմամբ կենտրոնացվածությունն ապահովելու համար,
6. Նախապատրաստել ուսանողներին ակտիվ պրակտիկայի, որպեսզի նրանք դառնան պրակտիկայի գործընթացի անմիջական մասնակիցներ (օրինակ, յուրաքանչյուր ուսանող գոնե մեկ անգամ դաս վարի, սպասարկման օբյեկտներում ծառայություն մատուցի և այլն),
7. Պրակտիկայի ընթացքում ցանկալի է ներգրավել մի քանի մասնագետներ:

Մասնաճյուղն ակնկալում է, որ պրակտիկայի շրջանակներում համագործակցող կազմակերպությունները նույնպես իրենց ներդրումը պետք է ունենան ապագա մասնագետի պատրաստման և կայացման գործում: Ակնկալում ենք, որ **<u>գործատուները կօգնեն ուսանողներին</u>**.

- բարելավել մասնագիտական որակները,
- սիրել ապագա մասնագիտությունը և կբարձրացնեն նրանց մոտիվացիան,
- ապահովել ապագա կարիերան, նրանց կուղղորդեն ապագա աշխատանքի ընտրության հարցում,
- բարձրացնել աշխատաշուկայի և գործատուների պահանջների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը,
- նպատակային տնօրինել ազատ ժամանակը՝ նրանց ներգրավելով իրենց կազմակերպություններում տարբեր պրակտիկ աշխատանքներում, և կաջակցեն բուհին այդ գործընթացում,
- դրսևորել ուսումնառության ընթացքում ձեռք բերած հմտություններն ու կարողությունները, պայմաններ կստեղծեն նրանց նորարարական մտածողության դրսևորման համար:

Ընդհանրացնելով պրակտիկանտ ուսանողների մասնագիտական և անձնային որակների վերաբերյալ 33 արտաքին շահակիցների կարծիքները, **կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.**

- Արտաքին շահակիցների մեծամասնության կողմից հատկապես ***բարձր են գնահատվել*** ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկանտների տեսական գիտելիքների իմացությունը, գործնական հմտությունների կիրառման կարողությունը, խմբային աշխատանք կատարելու ունակությունը, վարվեցողությունը և էթիկայի նորմերին հետևելու կարողությունը,
- Որոշ արտաքին շահակիցներ հատկապես ***կարևորել են*** ուսանողների մոտ մարդկանց հետ շփվելու և հաղորդակցվելու ձևավորված մշակույթը, անհատական մոտեցումը,
- Արտաքին շահակիցների մի մասի կարծիքով շրջանավարտների մոտ ***բարելավման ենթակա են*** մասնագիտական խոսքը, մասնագիտական գրականությունից օգտվելու և այն կիրառելու կարողությունը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը, որոշ մասնագիտությունների ուսանողների համար նաև դասավանդման ժամանակակից մեթոդներին և տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետելու կարողությունները:

**Ելնելով վերոնշյալ արդյունքներից, առաջարկվում է.**

- Հարցման արդյունքների մասին իրազեկել մասնաճյուղի դասախոսական և ուսանողական հանրությանը,
- Կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում ուշադրություն դարձնել նաև պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական տարբեր որակներին տված արտաքին շահակիցների կարծիք-գնահատականները,
- Ամբիոններին և ուսումնամեթոդական վարչությանը աջակցել մշակելու ուսանողների ստեղծագործական մտածողությունը և մասնագիտական խոսքը զարգացնելուն ուղղված միջոցառումների ծրագրեր,
- Ամբիոնների վարիչներին մշտապես ուղղորդել դասընթացների փաթեթներում առանձնահատուկ ուշադրություն դարձնել ինքնուրույն աշխատանքների, անհրաժեշտ ժամանակակից մասնագիտական գրականության, այլ ժամանակակից ուսումնական նյութերի ներառմանը,
- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչին ուղղորդել ուշադրություն դարձնել տարբեր մասնագիտությունների ուսանողների համար «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ» դասընթացի թեմատիկային և արդյունավետ իրականացմանը,
- Ուսումնամեթոդական վարչությանը առաջարկել ուսումնասիրել և հնարավորության դեպքում երկարացնել պրակտիկաների տևողությունը:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***